Կոդ ----------
Միավոր----------

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2025-2026 ուստարի)
10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. **Նախկին խորհրդային 11 ինքնիշխան պետությունների ղեկավարները ե՞րբ ստորագրեցին ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը:**
   1) 1990 թ. օգոստոսի 21-ին
   2) 1990 թ. դեկտեմբերի 25-ին
   3) 1991 թ. դեկտեմբերի 8-ին
   4) 1991 թ. դեկտեմբերի 21-ին
2. **Երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ Հռոմեական սրբազան կայսրության ո՞ր կայսրն էր խոստացել Լևոն II-ին ճանաչել Կիլիկիայի թագավոր:**
   1) Հենրի VI
   2) Ռիչարդ I Առյուծասիրտ
   3) Ֆրիդրիխ Շիկամորուս
   4) Ֆիլիպ II Օգոստոս
3. **Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը թագավորության անկումից հետո Կիլիկիայի սահմանագլխին գտնվող ո՞ր քաղաքում հաստատվեց:**
   1) Պիզու
   2) Տարսոն
   3) Լամբրոն
   4) Սիս
4. **Որքա՞ն էր կազմում հայոց զորքի թվաքանակը Ձիրավի ճակատամարտում:**
   1) 90 հազար
   2) 100 հազար
   3) 120 հազար
   4) 50 հազար
5. **Ո՞ր պաշտոնյան էր կառավարում Երևանի խանության (սարդարության) շրջանները (մահալները) պարսկական տիրապետության շրջանում:**
   1) Սարդարը
   2) Միրբոլուքը
   3) Քալանթարը
   4) Փաշան
6. **Ո՞ր թվականին Շիրակավանի ժողովը մերժեց բյուզանդական և հայկական եկեղեցիների միավորման առաջարկը:**
   1) 867 թ.
   2) 869 թ.
   3) 874 թ.
   4) 875 թ.
7. **Հայոց ո՞ր արքան է կառուցել հոգևոր կենտրոն Բագարանը:**
   1) Երվանդ III
   2) Երվանդ IV
   3) Երվանդ Սակավակյաց
   4) Տիգրան Երվանդյան
8. **Ե՞րբ է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին:**
   1) 1920 թ. մարտի 16-ին
   2) 1920 թ. հունիսի 12-ին
   3) 1921 թ. հուլիսի 4-ին
   4) 1921 թ. հուլիսի 5-ին

✂- - - -

9. Ե՞րբ է տեղի ունեցել ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միավորումը:

1) 1981 թ. 2) 1988 թ. 3) 1990 թ. 4) 1993 թ.

10. ԱՄՆ ո՞ր նախագահն է «Նոր կուրսի» քաղաքականության հեղինակը:

1) Ռոնալդ Ռեյգան 2) Ֆրանկլին Ռուզվելտ 3)Հարրի Տրումեն 4) Վուդրո Վիլսոն

11. Որտե՞ղ է ստեղծվել օպերային արվեստը:

1) Ֆրանսիայում 2) Ավստրիայում 3) Իտալիայում 4) Գերմանիայում

12. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Դարաշրջանի հարցերը վճռվում են ոչ թե ճառերով և քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ»:

1) Օտտո Բիսմարկը 3)Նապոլեոն Բոնապարտը

2) Ջուզեպպե Գարիբալդին 4) Բենջամին Դիզրայելին

Կարճ պատասխանով առաջադրանքներ

13. Ընտրե՛ք պնդումները, որոնք բնութագրական են Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման համակարգին *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Սենեսկալը հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:

բ. Պայլը թագավորի մանկահասակության դեպքում իրականացնում էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:

գ. Ամիրսպասալարը (գունդստաբլ) Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարն էր:

դ. Արքունիքի մեջ մտնում էին Արքունի խորհուրդը, Արքունի գերագույն ատյանը և գործակալությունները:

ե. Սենեսկալը զբաղվում էր բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ:

զ. Թագադիր գործակալությունը թագադրում էր արքային, կապում արքայական նշանները:

է. Կանցլերը ղեկավարում էր արքունի դատարանը և գրագրություն էր վարում օտար երկրների ներկայացուցիչների հետ:

14. Ընտրե՛ք այն պատճառները, որոնք պայմանավորեցին Բագրատունիների պետականության ստեղծումը *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Պարսկաստանում ծավալված ժողովրդական ապստամբությունները և գահակալական կռիվները թուլացրել էին կենտրոնական իշխանությունը, ինչին ակտիվորեն աջակցում էր Բյուզանդիան՝ ի հակակշիռ սելջուկ-թուրքական պետության աճող սպառնալիքի:

բ. Ավատատիրական հարաբերությունների զարգացումը, հայ իշխանների ժառանգական հողատիրության ամրապնդումը և տնտեսության վերելքը հանգեցրին հայ նախարարների ռազմաքաղաքական հզորացմանը՝ մղելով նրանց անկախության պահանջի:

գ. Հայ նախարարների հզորացումը և անկախության ձգտումը հանգեցրին Բյուզանդիայի հետ դավանաբանական միության կնքմանը, ինչը հնարավորություն տվեց անմիջական ռազմական օգնություն ստանալ կայսրությունից:

դ. Հայոց եկեղեցին հետևողականորեն ջանում էր ազատվել կրոնական անհանդուրժողականությունից ու հալածանքներից, իսկ աշխատավորական զանգվածները պայքարում էին օտարերկրյա ծանր լծի դեմ՝ նպաստելով համաժողովրդական համախմբմանը:

ե. Միջազգային ասպարեզում խալիֆայության դիրքերի խարխլմանը զուգընթաց՝ Սեֆյան Իրանը սկսեց հովանավորել արաբական ամիրայությունների կենտրոնախույս ուժերին, ինչը բարենպաստ արտաքին միջավայր ստեղծեց Հայաստանի անկախացման համար:

Զ. Արաբական խալիֆայության ներքին հակասությունների խորացումը և առանձին արաբ ամիրաների անջատողական քաղաքականությունն ու ամրապնդումը նպաստեցին կենտրոնական վերահսկողության թուլացմանը, որը Բյուզանդիան փորձում էր ամեն կերպ խրախուսել:

15. Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Սրբապատկերների պաշտամունքի դեմ սկսված շարժումն անվանվում էր *պատկերամարտություն*:

բ. Հունարենը պաշտոնական լեզու հռչակելուց հետո բյուզանդական թագավորն անվանվում էր *կայզեր*:

գ. Արշակունյաց արքունիքում թագաժառանգի դաստիարակությունն և խնամակալությունն իրականացնող գործակալությունը անվանվում էր *մաղխազություն*:

դ. Հռոմում մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ օժտված ռազմական միապետն անվանվում էր *կոնսուլ*:

ե. 1054 թ. եկեղեցական բաժանումից հետո արևելյան եկեղեցին անվանվում է *հռոմեականթոլիկական*:

զ. Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամը կոչվում էր *արքայի խորհրդական*:

է. Պատերազմի ժամանակ յուրաքանչյուր նախարարի տրամադրած զորքի քանակը սահմանող փաստաթուղթը կոչվում էր *զորանամակ*:

16. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ *(1 միավոր)*:

ա. պարսիկների պարտությունը արաբներից Քադիսիայի ճակատամարտում

բ. բյուզանդական զորքի պարտությունը արաբներից Յարմուքի ճակատամարտում

գ. Իսպանիայի նվաճումը արաբների կողմից

դ. Արմինիա փոխարքայության ստեղծումը

ե. Հուստինիանոս I-ի կողմից Արևմտյան Հայաստանի բաժանումը 4 զորավարությունների

զ. Հայաստանի արևմտյան և արևելյան մասերի միավորումը Թեոդորոս Ռշտունու կողմից

է. արաբների կողմից ողջ Իրանի գրավումը և Սասանյան պետության կործանումը

Վերլուծական հարցեր

17. Լրացնե՛լ բացթողնված հատվածը *(յուրաքանչյուրը 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր)*:

Ատրպատականի ամիրա (1) ---------- (ո՞վ) փորձեց օգտվել հայ իշխանների ներքին հակասություններից՝ հատկապես Արծրունիների և Սյունիների վեճից (2) ---------- (ո՞ր տարածքի) համար, որը Սմբատ I-ը հանձնել էր Սյունիներին։ Օգտվելով իրավիճակից՝ ամիրան (3) ---------- թ. (ե՞րբ) (4) ---------- (ո՞ւմ) հոչակեց թագավոր։ Բագրատունյաց թագավորությանը վերջ տալու նպատակով արաբները և Սմբատի նախկին հպատակները հարձակվեցին Հայաստանի վրա։ Երկիրը ենթարկվեց ծանր ավերածությունների։ Ամիրան պաշարեց (5) ---------- (ո՞ր) բերդը և Սմբատը, տեսնելով ժողովրդի ծանր վիճակը, անձնատուր եղավ։

18. Համապատասխանեցրե՛ք Կիլիկյան Հայաստանի պետական գործիչներին նրանց ձեռնարկումների հետ: *(ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*

Իշխան	Ձեռնարկում
1. Հեթում I	ա. Չդաշնակցեց խաչակիրների հետ՝ ռազմական գործողություններ ծավալելով նրանց և բյուզանդացիների դեմ՝ հենվելով Հալեպի էմիրության աջակցության վրա:
2. Կոստանդին I	բ. Մայրաքաղաքը տեղափոխեց Անարզաբա, դաշինք կազմեց խաչակիրների հետ՝ ընդդեմ Իկոնիայի սուլթանության:
3. Թորոս I	գ. Մանգու խանի հետ կնքեց հայ-մոնղոլական պայմանագիրը, որով մոնղոլներն ընդունեցին Կիլիկիայի անկախությունը:
4. Լևոն I	դ. Օգտվելով Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև եղած հակամարտությունից՝ գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջանները:
5. Մլեհ	ե. Ազատագրեց Կիլիկիայի ծովեզրյա հայաբնակ շրջանները, սակայն Բյուզանդիայի կայսեր արշավանքից հետո ընտանիքի հետ գերեվարվեց Կոստանդնուպոլիս:
	զ. Ազատագրեց Լեռնային Կիլիկիայի մի շարք շրջաններ և աջակցեց խաչակիրներին՝ դրա դիմաց ստանալով «դքսի» և «մարկիզի» տիտղոսներ:

1	2	3	4	5

19. Ներկայացրե՛ք աշխարհագրական մեծ հայտնագործությունների 2-ական դրական և բացասական կողմեր: *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*

Դրական	Բացասական
1.	1.
2.	2.

20. Ներկայացրե՛ք նշված թագավորների ներքին քաղաքականության 2-ական օրինակ: *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)* :

Աշոտ II Երկաթ	Աշոտ III Ողորմած
1.	1.
2.	2.

21. Ներկայացրե՛ք Թութմոս III-ի և Ռամզես II-ի գործունեության երկու օրինակ *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)* :

Թութմոս III	Ռամզես II
1.	1.
2.	2.

22. Ճանաչե՛ք նկարը և ներկայացրե՛ք իրադարձությունը *(2,5 միավոր)*:

1. Ո՞ր իրադարձությանն է նվիրված ֆրանսիացի նկարիչ Ադոլֆ Իվոնի սույն կտավը: Ո՞վ էր Մոսկվայի իշխանը նշված իրադարձության ժամանակ:
2. Ե՞րբ և ո՞ր գետի ափին է այն տեղի ունեցել:
3. Նշի՛ր 2 հետևանք, որ ունեցավ վերը բերված իրադարձությունը:

---

23. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

«Նա հոշոտվեց կրկին հասցված հարվածներից: Ապա այսպիսի նենգությամբ խարդախվեց՝ դյուրահավատությունը: Հյուրընկալության ժամանակ օտարականի արյունը թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա՝ Աստծո հյուրասիրության դեմ հանդիման, մի բան, որը նույնիսկ Եվքսինյան Պոնտոսի կողմում խղճմիտ երկյուղածության արժանի վարմունք է համարվում: Այնուհետև, ճաշկերույթի մասնակիցները, չափից դուրս հագեցած պատահարից, սարսափահար դուրս փախան»:

1. IV դ. ո՞ր իրադարձության մասին է պատմում սկզբնաղբյուրը և ե՞րբ է դա տեղի ունեցել *(1 միավոր)*:

---

2. Ո՞ր երկիրն էր կազմակերպել դավադրությունը և Ինչո՞ւ *(1 միավոր)*:

---

3. Նշե՛ք այս իրադարձությանը նախորդած արտաքին ու ներքին քաղաքական 2 իրադարձություն *(1 միավոր)*:

(1) ----------

(2) ----------

24.Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

«Ես անկեղծ հիացմունք ու հարգանք եմ տածում խորհրդային ժողովրդի և իմ ռազմական ընկեր մարշալ Ստալինի նկատմամբ: Ես չեմ հավատում, որ Խորհրդային Միությունը պատերազմ է տենչում: Նրանց ուզածը պատերազմից ստացած ռազմավարներն են և իրենց իշխանության ու դոկտրինների անսահման տարածումը:

Երկաթե վարագույր է իջել մայրցամաքի [Եվրոպայի] վրա: Այդ գծից այն կողմ պահվում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հնագույն պետությունների բոլոր գանձերը»:

1. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: Ինչպե՞ս անվանվեց այդ ելույթով սկսված ժամանակաշրջանը *(1 միավոր)*:

---

2. Ի՞նչ ռազմական դաշինքներ ստեղծվեցին այդ ժամանակաշրջանում (նշե՛ք 2-ը. գրել ստեղծման տարեթվերը և դաշինքների 3 անդամ-երկրի անվանում) *(1 միավոր)*:

---

3. Ի՞նչ հետևանքների հանգեցրեց այդ ընթացքում ծավալված պայքարը (նշե՛ք 2-ը) *(1 միավոր)*:

1. ----------

2. ----------

25. Աշխատանք քարտեզի հետ:



1. Ո՞վ և ե՞րբ է գծել ընդգծված Հայաստան-Թուրքիա սահմանը *(1 միավոր)*:

---

2. Ո՞ր նահանգներով էր անցնելու այդ սահմանը *(1 միավոր)*:

---

3. Ինչու՞ իրականություն չդարձավ այն (նշե՛ք 2 պատճառ) *(1 միավոր)*:

Պատմության օլիմպիադայի

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

27.03.2026 թ.